

լի կը քառաձիգ ժողովրդոց միաճն ու սիրտը՝ ո՛չ մենք զիսկեք, և ո՛չ ալ զայն գուշակող զին առաթիւն մը կայ : Սակայն ստոյգ է թէ աշխարհս ընդարձակ և դանդաղ ճիգերով կը պատրաստուի Հիմնական փոփոխութեան մը : և թէ յառաջիկայ նոր դարուս մէջ, իբրեւ քաղաքացի ու իբրեւ մարդ, դուք պիտի ոգորեք այնպիսի դժուարութեանց դէմ, որոնք մեծ մասամբ կը տարբերին անոնցմէ որ մեզի դիմադրեցին ու դեռ կը դիմադրեն, թէ ձեզի ուրիշ առաւելութիւններ հարկաւոր պիտի ըլլան : և թէ ձեզմէ պիտի պահանջուին ուրիշ զոհողութիւններ, որոնց մենք չենք կոչուած : Բայց դուք այս ամէնուն ալ քաջարի ոգով պիտի դիմադրուիք, քորտալիզելով զանո՛ր ոչ միայն արդարութեան ու բարեւոյն վերջնական յաղթութեան հաստեղծով, այլ նաեւ սա մտածութեամբ՝ թէ որչափ ալ զարմանալի թուին ձեր շուրջ տեսնուած նորութիւնները, բայց ձեր ներսէն բխածներն ալ նուազ զարմանալի պիտի ըլլան, և այն՝ ոչ այնքան ժամանակիկ բնական արդիւնքով, որչափ արտաքին փոխուած իրեւրու զօրութեամբ : Թաքուն կարողութեանց յանկարծական և սքանչելի ծաղկումներ, որոնք նորանոր յոյգերով բեղունաւորուած ու նոյնպէս ծնած են անակակալ պատահականութիւններէ, հանճարին յանկարծական խոտորումներ և յաղթական արշաւանքներ ճամբաներու մէջէն, որոնք ոչ միայն չեն հետախուզուած, այլ դեռ մինչեւ վերջերս անծանօթ մնացել էին. հասարակական վտանգներ և ցաւեր զրգուած մտքի անկարծելի ոյժեր, և իմացականութեան ու կամքի բաւոր ոյժերու խանդաղին նուիրազօր ծուծիւններ՝ զաղափարներու ստորակարգուած որոնց քսան տարի է որ միտքն ունշողութիւն չէր զարձանը, եթէ ոչ դուցէ գանձեց յաղթաւոր հարելու և ծաղրածելու համար, այս ամէնքն ալ ձեր մէջը պիտի իրագործուին, և այնչափ փոփոխութիւն պիտի ներգործեն ոմանց վրայ, որ իրենց զիրենք այս օրերուս յիշատակներուն մէջ փնտելով պիտի պաշին իրենց հին պատկերին վրայ : Այս ամէնքը պիտի իրագործուին : Եւ դուցէ ինչ ունկնդրողներուն մէջ արդէն իսկ նոր զարաշխման հետ անգիտակից նշանաւոր կան, բարեյաջող նմոյսեր գեղեցիկ զաղափարներուն նշանաւոր կամ անշուք՝ բայց հաստատարպէս վեհանաճ զոհեր մեծամեծ կրճերու, ճակատներ որ պիտի բարձրանան ուրիշներու վրայ՝ իբրեւ յարացոյց օրինակներ, անուններ որ պիտի սիրուին և օրհնուին : Յարգանքով կ'ողջունենք ձեր մէջ խոստումներու,

նախասահմանութեանց և խորհուրդներու լիութիւնը, և եթէ զմեզ խոզովոյ բան մը կայ՝ ձեզի հրաժեշտի կեցցէն զոչելու ժամանակ, երկիւղէ և այն բաւական աշխատած, մտածած և կրած չլլայնեալ, ձեր առջեւ հարկուած հասարակ ճամբան, որուն մէջէն կը յառաջանաք դուք, և ուր սրտով պիտի ընկերենք ձեզի՝ մինչեւ որ հորիզոնը քողարկուի մեր աչքերէն :

Եւ հիմայ, դեռ ի՞նչ աւելի բան մը կրնամ ըսել ձեզի : Այս գեղեցիկ երեկոյթը աւարտելով, դուք միայն պիտի մնաք ձեր զուարթ գուամարումներուն մէջ : Բայց մենք ամենօրեայ հոգեւրու և նեղութեանց մէջ, ստեպ մտքով պիտի դառնանք երիտաւորութեան քանի մը ժամերուն, որով զմեզ վերստին կենդանացուցեք, այս պատերուն մէջ, ուր նաեւ այնչափ հեռաւոր սերելիներու փափաքը պիտի գայ զձեզ գտնելու, ուր պիտի գան ձեր ձեռքը սեղմելու՝ ուրիշ դաւառներու և ուրիշ ժողովրդոց ընկերակիցներ, ուր այնչափ զուարթութիւն, այնչափ ոգեւորութիւն և մտածութեան ու սիրոյ այնչափ զարուաններ՝ ապագային պիտի ընծային ծաղկիկներ և պտուղներ : Ուրեմն երկայն կեանք ունենալ, ձեր կանառը : Եւ այն՝ չլլայ միայն տեղ մը, ուր գեղեցիկ իշտակամութիւններ կը հաստատուին, այլ ըլլայ նաեւ տեղ մը, ուր թշնամիներն միմեանց ազնուութեան զօրութիւնէն յաղթուած, իրարու հետ հաշտուին նորէն, ուր հանճարի նախանձայուս զուրթիւններ երեւան գան, ուր հակառակ կուսակցութեանց կարծիքները փոխանակեն իրարու՝ քաղաքավարութեան յարգանքը՝ այնպէս որ կարենաք սեւել՝ ուսմանց մէջ նախաձայնոյց, կենդանի մէջ մրցակից, քաղաքականութեան մէջ զերծ ամէն կապերէ, բայց հոս՝ եղբայր ենք մենք : — Ձեզմէ, որ ձեր սերունդին մտաւորական յառաջապաններն էք, ձեզմէ անոնց որ կեանքի ոգորումին մէջ յաղթող պիտի հանգիստանան, անոնց որ պիտի ինչան, անոնց որ վերքերով ծածկուած, դեռ պիտի շարունակեն պատերազմել մինչեւ վերջ, ձեզի ամենուզ ալ, նոր և աշուսական արիւն հայրենեաց, մեր մտածութեան ու մեր սրտին սրբաւոր յոյգերուն սրելիք՝ որդիքը, ողջոյն : յաջողութիւն և փառք :

ԱՐԱՐԱՏ. — Շ ամսաթիւթ քրօնակամ, քամա. սիրակամ : — ԳԻՐԺ Է 4 րութի :
 Հասցէ Rédaction de la Revue ARARAT (Russie-Transcaucasie) ETCHMIADZINE (près Valarchapat).